

**Երբ մեկն է մեր տակից փախչում, երկու ձիու վրա խաղալ  
հնարավոր չէ**

**Սարգսյան Սուրեն Թ.**

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)  
sargsyansuren@yandex.ru*

Աշխատանքի բերումով հաճախ են անցնում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան մոտով: Նկատել են, որ վերջին տարիներին այնտեղ երկար ու ոլոր-մոլոր հերթեր են գոյանում: Դե, բազմամարդ համայնք ունենք, հազար ու մի հարցեր, արտագաղթ: Երբեմն էլ ցուցարարներ են լինում, իրենց ասելիքն ասում-գնում են: Բայց Մարտի 19-ին ակնատես եղա բավականին մարդաշատ ցույցի: Մարդիկ եկել էին և ձյունն ու ցուրտն արհամարհելով՝ իրենց գորակցությունն էին հայտնում մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանին:

Պատերազմն, իհարկե, լավ բան չի: Ոչ ոք չի սիրում այն: Ինքս էլ բնույթով խաղաղասեր եմ, արյուն ու պատերազմ մերժող: Նաև բավականին խորքային պատկերացում ունեմ մերօրյա ռուս-ուկրաինական պատերազմի մասին ու կարող եմ ասել, որ սխալվում են բոլոր նրանք, ովքեր դա համարում են լոկ ռուս-ուկրաինական: Ավելին, եթե բացառենք դրսի ուժերի փողերն ուտող ու ստիպված նրանց թելադրանքները կատարող արևմտաուկրաինական հատվածի ծայրահեղականներին, ապա ո՛չ ռուս և ո՛չ էլ ուկրաինացի ժողովուրդներն իրականում իրար թշնամի չեն եղել երբեք և չեն նաև այսօր:

Այսօր Ուկրաինայում ուկրաինացիների արյան գնով ու նրանց իսկ ձեռքով արևմուտքը նենգաբար հերթական անգամ պայքարում է աշխարհում իր խաթարված մենատիրությունը վերականգնելու և դրան արդեն 300 տարի խանգարող Ռուսաստանը ոչնչացնելու համար: Նենգաբար, որովհետև մնացյալ բոլոր դեպքերի նման այս անգամ էլ է դա արվում ժողովրդավարության քողի ներքո: Ու որքան էլ Չեչենսկին «բաջաբար» հոխորտա ու հայտարարի մոտալուտ հաղթանակների մասին, նրա արցունքակալած աչքերը մատնում են իր երկրի իրական ցավաշատ վիճակը: Հանճարեղ Ֆրիդրիխ Նիցշեն ասում էր, որ քրիստոնեությունը նույնիսկ արիական ցեղի կայուն և ուժեղ հետևորդ հայերին վերածեց ենթակա, խղճուկ և թուլամորթ վիճակի, միանգամից կոտրելով, վերացնելով անսահման մշակութային փառքի և ազնվական փայլի հասած այդ ցեղը: Նույնը հանգիստ կարելի է տարածել արևմուտքի թելադրած ժողովրդավարության և սեփական արմատներից հեռացած ու դրա հետևորդ ուկրաինացիների վրա:

Ժամանակակից աշխարհաքաղաքական պայմաններում այսօր չգիտես, վաղն ինչ կլինի, կյանքիդ գնացքը որտեղ կանգ կառնի: Կարևորն այն է, որ մարդ ուր էլ գնա, ուր էլ լինի, ինչ ճամփաներ էլ հաղթահարի, իջնի ու բարձրանա, հարկավոր է միշտ հիշել՝ անհրաժեշտ է նախ լավ մարդ լինել և երբեք հոգին չաղտոտել: Չգիտես, թե վաղն ինչ է լինելու: Իսկ բոլոր այն մարդիկ ու ժողովուրդները, որոնք կտրվում են իրենց արմատներից, բնականոն ու միայն իրենց հատուկ զարգացման ուղուց և դավանում են օտար ու խորթ արժեքներ, հազիվ թե հաջողություններ արձանագրեն: Միանգամայն ճիշտ է ասված և ուկրաինացիների ներկա վիճակը բնութագրող է՝ դժբախտությունը նրանում չէ, որ չհանդիպեցիր երջանկության, այլ նրանում, որ բաց թողեցիր այն:

Այս օրերին ամբողջ Արևմուտքը, որ սնվում ու տաքանում է Ռուսաստանի էներգակիրներով, նրա դեմ է: Կովելուց բացի ամենատարբեր ձևերով աջակցում են, զենքեր մատակարարում, լիուլի խոստումներ շռայլում: Չեչենսկին էլ ոգևորված մինչև վերջ հանուն ազատության կռվի կոչ է անում: Ռուսաստանի դեմ պատժամիջոցներն օր օրի խստանում են: Դժվար է միանշանակ ասել, թե այս ամենը երբ կվերջանա: Արևմուտքի ոչ մի երկիր Չեչենսկուն չի հորդորում համաձայնել Ռուսաստանի պահանջներին և դադարացնել պատերազմը, իսկ վերջինս էլ դրանից ոգևորված, չգիտես ի՞նչ հույս, չի ընդունում ռուսական վերջնագրերը: Ոչ մեկին չի հետաքրքրում, թե ի՞նչ սարսափներ է կրում քաղաքացիական հասարակությունը: Արևմուտքը խոստումներով ու զենքեր մատակարարելով՝ ցանկանում է երկարացնել Ուկրաինայի անկման գործընթացը: Նրանց կարծիքով Ռուսաստանն էլ երկար չի կարողանա դիմակայել պատժամիջոցներին և պատերազմի երկարացնելու դեպքում նրա տնտեսությունը ևս լուրջ խնդիրներ կունենա:

Արդեն այն հայեցակարգը, որ ժողովրդավարական Ուկրաինան դառնում է ռուսական ագրեսիայի գոհը, իրեն չի արդարացնում, քանի որ այսօր շատ հաճախ «ժողովրդավարություն եզրույթի» շահարկմամբ փլուզվում են համակարգեր և ստեղծվում ազդեցության նոր գոտիներ: Հետխորհրդային տեղատվության շրջանում ժողովրդավարության կարգախոսների ներմուծումը Ռուսաստան հանգեցրեց այդ ուժեղ, զարգանալու համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսներով

հարուստ պետության մասնատմանը, ինչ որ պահի նաև՝ փլուզմանն ու քաոսին: Չղրվատելով Պուտինի պատերազմ սկսելու քայլը, կարծում ենք նաև, որ հայտնի ճանաչումներից հետո Ռուսաստանն այդ երկրամասերի անվտանգությունն Ուկրաինայից ապահովելով չէր կարող հասնել լիարժեք խաղաղության: Քանի որ վերջինս դարձյալ կշարունակեր ընդդեմ Ռուսաստանի զինվել: Այդ մասին է վկայում նաև այն, որ երբ Ուկրաինայի նախագահը շարունակաբար հայտարարում էր, որ չի գնալու պատերազմի, Արևմուտքն ու ԱՄՆ-ը նույնիսկ պատերազմի սկսնալորման օրեր էին մատնանշում: Հայտնի է նաև, որ Ռուսաստանը Ուկրաինայի անձնատվության ու դրանով պատերազմի ավարտի համար նույնիսկ 96 ժամ ժամանակ տվեց: Այնպիսի տպավորություն է, որ վերջիններս շահագրգռված էին այս պատերազմով:

Պատերազմի ավարտի և ժամկետների հետ կապված անհիմն եզրակացություններից խուսափելով նշենք միայն, որ հստակ է, որ՝

1. Այլևս նախկին տեսքով Ուկրաինա ցանկացած պարագայում չի լինելու:

2. Մեծ տերությունների առաջնորդներն այս պահին նրա քաղաքական ապագայի վերաբերյալ միայն տեսություններ են մտնում:

3. Ռուսաստանին պատժելուց բացի նրանց ոչինչ չի հետաքրքում: Հակառակ դեպքում մի փոքր կոչ-հորդոր նրանց կողմից և Ուկրաինան կործանման տանող հրեա Չելենսկին անմիջապես կհամաձայնվի զինադադարի:

4. Հերթական անգամ համոզվում ես, որ «ժողովրդավարական արժեքների» պահպանումը ժողովուրդների կյանք է արժենում:

5. Համոզվում ես, որ քիչ չեն նաև այնպիսի երկրները, որտեղ համակարգերը ժողովրդավարական չեն, բայց տնտեսապես ձեռնառու են ԱՄՆ-ին ու Արևմուտքին:

6. «ժողովրդավարական արժեքների» պահպանները թթած ունեն, թե որքան անմեղ մարդիկ, կանայք ու երեխաներ կգոհվեն կամ կխեղվեն, քանի միլիոն անտուն ու թափառական կղառնան, որքան ճակատագրեր, կառույցներ, արվեստի, կրոնական ու կրթամշակութային օջախներ կփոշիանան:

7. Հանուն միաբնեռ աշխարհի պահպանման թող վերջնականապես կործանվի անխելք ու անհեռատես Ուկրաինան:

8. Դժվար է հստակ գտնել ժողովրդավարության օգուտների և վնասների սահմանները: Մա հեղափոխություններ անելու իրական շարժառիթն է:

9. Ուկրաինայի բախտին կարժանան նաև բոլոր նրանք, ովքեր առանց հզորների համապատասխան «դաբրոյի» կփորձեն խաղեր տալ ու սեփական խաղը խաղալ, որպիսիք վերջերս հաճախ անում է օրինակ Թուրքիան:

Այս ամենի հետնախորքում հետաքրքիր գործընթացներ են նկատվում նաև մեզանում: Մեզանում մարդիկ հաճախ կուրորեն հետևում են մի բանի, որի միայն արտաքին փայլն են տեսնում: Օրինակ՝ հետաքրքիր է Ռուսաստանի կործանման համար աղոթք բարձրացնող հայ, արևմտամետները, որոնք վերջին շրջանում շահարկելով ՌԴ-Ադրբեջան դաշնակցային պայմանագիրը՝ ՌԴ-ին ներկայացնում դավաճան, իսկ Արևմուտքին՝ մի փրկիչ, որն, առայժմ չի փրկում Հայաստանն ու հայ ժողովրդին, քանի դեռ կա Ռուսաստանը: Հետաքրքիր է, այդ մարդիկ կարդացնել են ՆԱՏՕ-ի կանոնադրությունը: Եթե այո, ապա ինչու՞ են թաքցնում վերջինս դրույթները: Ինչու՞ չեն հայտարարում, որ ՆԱՏՕ-ն ունի միասնական պաշտպանական և այլ հզոր համակարգեր: Իսկ եթե խոսենք ռազմական և այլ փոխօգնության այնպիսի պարտավորությունների մասին, որոնք ունեն Հայաստանի թշնամի Թուրքիան ու, օրինակ, ԱՄՆ-ն կամ եվրոպական բազմաթիվ երկրներ, ապա դրանց դիմաց ՌԴ - Ադրբեջան դաշնակցային պայմանագիրն ուղղակի անուշաճոր մեղր կարող է թվալ: Չնայած նեղվածությանս, իրականում՝ ես երբեք ինձ թույլ չեմ տա հայիոյել, օրինակ, Գերմանիային, Ֆրանսիային, կամ նույն ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ի անդամ շատ երկրների՝ այն բանի համար, որ վերջիններս այդքան խորը ռազմական և այլ կարգի համագործակցության մեջ են մեր դարավոր թշնամու հետ: Նույնկերպ որպես թշնամի պետություն չեմ ներկայացնում նույն Ֆրանսիային այն բանի համար, որ 1921 թ. դավաճանաբար ծախեց Կիլիկիան Թուրքիային, այժմ էլ նրա հետ նույն ռազմական ճամբարում է:

Այսինքն, կարծում եմ, որ ամեն ինչ չէ, որ պայմանավորված է ՆԱՏՕ-ով: Նույն Ֆրանսիան մի կողմից Թուրքիայի հետ ՆԱՏՕ-ի շրջանակներում խորը ռազմական համագործակցության մեջ է, մյուս կողմից՝ Հայաստանի բարեկամ երկիր, որտեղ անգամ օրենքով քրեականացված է Հայոց ցեղասպանության ժխտումը: Նույն ՌԴ-ն կարող է համագործակցություն ունենալ Թուրքիայի կամ Ադրբեջանի հետ, բայց նաև ռուսական զորքերն ԱՅՍ ՊԱՀԻՆ ՄԻԱԿՆ ԵՆ, որոնք հանդիսանում են Հայաստանի իսպառ բնաջնջման թուրանական ծրագրերի իրագործման հիմնական արգելքը: Որպես կանոն այս դեպքերում արևմտամետները կհակադարձեն, թե Արևմուտքը կզսպի Թուրքիային: Այնինչ 1974 թ. ամռանը Եվրոպայի քթի տակ մեկ ամիս էլ չտևեց Կիպրոսի 40%-ի օկուպացիան այդ

նույն Թուրքիայի կողմից: Նույնկերպ՝ Վրաստանի (այն այսօր տարածաշրջանի ամենաթույլ պետություններից է և, հասկանալով իր տնտեսական և ռազմավարական շահերը, չմիացավ ՌԴ-ի պատժամիջոցներին), Ուկրաինայի և այլնի օրինակները ճիշտ հակառակի մասին են խոսում: Միանգամայն տեղին կլինի, որ բոլոր լրջախոհ ուժերը, որոնք գիտակցում են Հայաստանի և հայ ժողովրդի կենսական շահերը, երբեք միակողմանի չձայրահեղացնեն իրերը, այլ աշխատեն և՛ Արևմուտքի, և՛ ՌԴ-ի հետ: Սակայն ցավոք, մի խումբ արևմտամետ խաղացող խոպանչիներ, որոնք վայելում են իշխանության ուղղակի և անուղղակի աջակցությունը, իրենց «զաղափարական» ցանցը զցելով պարզունակ մտածողների և ստորաբար շահարկելով այդ մարդկանց հայրենասիրական զգացումները, վերջիններիս հանել են ՌԴ-ի դեմ: Հասել ենք այն մակարդակի, որ մարդիկ արդեն կուրորեն հավասարության նշան են դնում ՌԴ-ի ու... ցեղասպան Թուրքիայի միջև...

Այսօր հստակ է, որ ՀՀ արտաքին քաղաքականությունն այդպես էլ չի դառնում հստակ: Մի կողմից Ադրբեջանի հետ սահմանազատման և պայմանագիր կնքելու վերաբերյալ բանակցություններ ենք վարում, մյուս կողմից՝ արտգործնախարարը ՄԱԿ-ին է դիմում է և բողոքում օկուպացված Շուշիում նրա ներկայացուցիչների հետ կազմակերպված միջոցառման դեմ: Կարծես թե մոռանում ենք և ժխտում, որ դա հիմա նրանց ձեռքին է, իսկ մեր իշխանությունները հայտարարել են, որ տարածքների հարց չի դնում և հինգ կետերով պահանջների վերաբերյալ իր պատասխանում շեշտել է, որ Արցախի խնդրի հիմքը պետք է լինի ինքնորոշման իրավունքը և այն պետք է կարգավորվի Միսկի խմբի շրջանակներում: Արդյո՞ք սա արտուրդի տիրույթում չի: Հետաքրքիր է, ինչու՞ ենք ինքներս մեզ համար հակասական վիճակ ստեղծում, մի կողմից ջանքեր ենք գործադրում խաղաղության հասնելու համար՝ առանց տարածքային պահանջների, մյուս կողմից ցույց ենք տալիս, որ ունենք նման պահանջներ: Կարո՞ղ ենք գոնե մեկ անգամ խելացի լինել և ձգտել խնդիրը լուծել լուռ պատրաստվելով և հարմար պահի սպասելով: Պետք է հասկանանք վերջապես, որ ՄԱԿ-ին դիմելով ոչինչ չենք շահի, քանի որ այն Արցախն համարում է Ադրբեջանի տարածքի անբաժն մաս: Հետո էլ այդ դեպքում Ադրբեջանը դա կդիտարկի միջամտություն իր ներքին գործերին: Իսկ դա արդեն դիվանագիտություն չէ: Հասկանանք վերջապես, որ երբ մեկ ձին է մեր տակից փախչում, հնարավորություն չունենք երկու ձիու վրա խաղալու:

Հարկավոր է վերջապես ըմբռնենք, որ կեղծ է այն հայրենասիրությունը, որ թելադրվում և ներկայացվում է օտարի կողմից, օտարի լեզվով: Քանի որ այդպիսի դեպքերում մենք մեր զավակներին կօտարացնենք մեզանից: Մերնդափոխության ընթացքում էլ արդեն նրանց զավակները անունով միայն կլինեն հայեր, իսկ հաջորդ սերունդները ավելորդ կհամարեն նույնիսկ այդ անունները կրել: Ուրեմն խելամիտ լինենք, հիշենք այսօրյա Ուկրաինան, դասեր քաղենք ու հետևություններ անենք, մեր դպրոցներում մայրենին հնչեցնենք, մեր ուղեղով մտածենք ու համազգային շահերով առաջնորդվենք: Ուշադիր լսենք խելացի մարդկանց և ինչպես ռուս քաղաքական գործիչ Ալեքսանդր Շերինը վերջերս բազմախորհուրդ ձևակերպեց՝ **«Թուրքերը միշտ են եղել Ռուսների և Հայերի թշնամին, ժամանակն է հիշեցնել թուրքերին, որ Մուլթ Արսարատ լեռը դեռ թուրքիայում է»...**

22.03.2022